

Աշխարհնորոգ պայծառութեամբ յար ցնծայ, Բեզ ամանաթ, է՛կ ի հողս իմ աւետեա՛, Զի զովասցի փտեալ ոսկերքս, բարով մնայ²⁴:

Ա.ս. սիրելի իմ, զխաչս սրբոյն հոխիսիմ-մեայ, Բեզ յօգնութիւն ի վերայ քո լաւ պահեա՛, ԶԱստուածաշունչն հոգեւոր տեսուն ըն-ծայեա՛²⁵, Վասն իմ հոգոյս աղօթեացէ, բարով մնայ:

Նա՛ւ որք հեռի կան սիրելիքս ողջունեա՛, Յոյժ գորովով զմահտեսի մայրդ սիրուեա՛, Որդեակ իմ, լա՛ց դու ընդ նմին եւ ողբա՛, Աշխարհ չասէ ինձ անորդի, բարով մնայ:

Ողորմելի ողբով զբաներս դու ասա՛, Եւ յուսով քո բա՛րձ զգազաղս եւ զընա՛, Զիս քո ձեռամբ ի գերեզմանն ամփոփեա՛, Օրհնեղբուքեամբ ընդ քահանայսն, բարով մնայ:

Ղեղի քան զմահ դառն եւ զիժար այլ չըկայ, Բարեկամաց եւ ի ծանօթից հեռացայ. Գործոց բարեաց մի՛ ձանձրանայք յարակայ. Վարպետայք դուք եւ մահտեսիք, բարով մնայ:

Բնաւ ի ձեր սէրդ անյազ գոլով զատեցայ Այլ չեմ տեսներ ձանփաքս հեռու էլիխոսայ, Ա՛յ սիրանունդ որդեակ իմ դու Երեմիա, Զասցեալ ողբերս լալով պատմէ՛, բարով մնայ:

Բեզ Տէր Աստուած որդեակ արու յորժամ տայ, Խնդրեմ զանունըն Ամբակում անուանեա՛,

²⁴ Երեմիայի պարտականութիւն կը կտակէ, երբ Ս. Յակոբը իւր յափշտակիչներէն ազատի, գալ իւր գերեզմանին վրայ աւետիս տալ, որպէս զի իւր փոսած ոսկերտութիւնը զովանան. ի՛նչ բարեպաշտութիւն:

²⁵ Փիլիպպոս կաթողիկոս Կ. Պոլիս գտնուած միջոցին կը խնդրէ մահտեսի Ամբակումէն, իրեն հա-մար Աստուածաշունչ մը զրել տալ: Զայն գրողներն ու ծաղիկողները, որք Զէլէպի իւր Օրագրութեան մէջ կ'անուանէ՛ Պարսաւիի նուարթ քաղաքիս եւ ծաղ-կողքն երեք չորս տարի անկատար կը թողուն: Փի-լիպպոսի մահէն վերջ, յաջորդը՝ Յակոբ կաթողի-կոս առանձին նամակով Աստուածաշունչը զրկելու մասին խոստումը կը յիշեցնէ Ամբակումէն, որ մա-հուան ժամուն շուրջ գտնուողներուն մօրմօրելով կ'ըսէ. Ո՛ր փառաւոր քրդեակի իմ, զիս՞քո՞ն ո՛չ եղի արժանի առաքել զԱստուածաշունչ յիշատակի իմ առ հոգեւոր Տէրն եւ կարօտ մնայի յօրհնութիւնն ու կը կտակէ Երեմիայի, որ ի կատար ածէ իր այդ խոս-տումը (նամակ Մեսրոպ եպ. Նշանեանի):

Ողբիս մէջ յիշուածը այդ Աստուածաշունչն է որու մասին տարբեր կերպ գրուած է Տարեգրական պատմութեան մէջ ինչպէս յիշած եմ էջ 147:

Անդաւակիս ըզլիշատակն միշտ պահեա՛, Ընդ պատմազիրս շարադրեա՛, կա՛ց բարով մնայ:

Ունի նաեւ իւր Տէր Հօրը վրայ Ողբ մը, զոր գարձեալ Տէր Մեսրոպ Սրբազան յղած է ինձ Երուսաղէմէն, եւ է հետեւեալը՝

Գանձ եւ Ողբ Երեմիա Զէլէպոյ ասացեալ ի վերայ Հօրն Տէր Մարտիրոսի Քէօմիւր-նեան:

Երգս ողբոց արժան, երգս կազանական, ողորմ ողբական, Աւա՛ղ եղկական, ըստ մեր թշուառութեան, որբոցս հիքական:

Ողբայ Հայաստան, ուր կայ բարեկամ եւ մեղ սիրական.

Լացէ՛ք դուք լալկան, ընդ մեր տխրութեան, ըստ փողոյն տարսոնեան,

Յաւուրս ծանրութեան, կսկծոյս դիպման, որբոցս դառնութեան.

Գրբոհք Արամեան, դուք համայնգամայն, աղքատք եւ փարթամ.

Գոյժս ուր որ հասան, բոթոյս սլացական ամսոսալ արժան,

Քեօմուրճոյս մահուան, մեծ հոչական, մեծ զարմացական.

Արդ մխիթարեա՛ զորբացեալս ի սմանէ Ս. Հոգի Աստուած.

Աղաչեմք. լո՛ւր տէր եւ ողորմեա՛:

Բամից ժողովից, սուրբ պաշտօնէից, եւ քա-հանայից.

Պարուց երջանկից, սրբոց բարունից, փոքր մի պատմեցից:

Սեռից տեսակից, սա ի մեծ զարմից, յազ-նուականից.

Նախ յԱրեւելից, ի պապանց տոհմից, գան յԱրեւմտիս.

Ի Դարանաղիս, բնակեալք ի շինիս, անուամբ Խօճայից:

Անդ յորդոց յորդիս, զարմ եւ զուականից, ըստ ժամանակից.

Յետոյ ձէլալից, նեղութեանց վշտից, չուեալ հայրն անտից.

Գայ ի կողմանիս, ի Կելիպոլիս, տեսեալ զճնունդ արուիս:

Մինչ նոր հանգստիւ, նոր օթեւանից, տրո-հեալ եւ յաստից:

Արդ Մխիթարեա՛ եւ այլն:

Եղեւ որբացեալ, հայրս մեր անուանեալ, Մարտիրոս կոչեալ.

Զորս տարւոյ մնացեալ, յարհետ շատ փո-խեալ, մինչ յարբունս հասեալ:

Բազումք սիրեցեալ, եւ յոմանք ժլտեալ, կարք յաշխարհ մտուցեալ.

Ի Սաղիմ յղեալ, Տէր Գրիգորն ընտրեալ, հայրապետն յարեալ.

Նա եւս ընկալեալ, երկու ամս պահեալ, ընտրեալ եւ փորձեալ:

Էրէց ձեռնադրեալ, եւ նամակ շնորհեալ եւ զիղձս իւր գրեալ.

Ամանաթ իմ լեալ, հազարապատկեալ, զնոր-ընծայք պատուեալ.

Զի ըստ Աստուծոյ, է իմ զգա օրհնեալ, այս-պէս ծանուցեալ:

Արդ Մխիթարեա՛ եւ այլն:

Մեծն ի կարգն յարգեալ, փիլիպպոսն գո-վեալ, հայրապետն ընտրեալ.

Յորժամ աստ եկեալ, մեծ էրէց կարգեալ, եւ պատուաւիրեալ:

Հայր հանուրց եղեալ, բարունեաց աղղեալ, եւ այնք ընկալեալ.

Ի շխանք սիրեցեալ, ժողովուրդ բերկրեալ, ռամիկք մեծարեալ:

Քաջաջան կանգնեալ, ամենայնք հաճեալ, համայնց ճոխ գտեալ.

Զի զանուն ստացեալ, յաշխարհ տարածեալ, եւ փառաւորեալ:

Որբոց հայր եղեալ, այրեաց նապաստեալ, պանդխտաց օգնեալ.

Զօտարս ժողովեալ, պաշտօնաւորեալ, իբրու-զառաքեալ:

Արդ Մխիթարեա՛ եւ այլն:

Ի վաղձան հասեալ, յաշխարհ համբաւեալ, Քէմուրճիս կոչեալ.

Վեց աւուրք անկեալ, փոքր ինչ ծանրա-ցեալ, զԱստուած կարդացեալ:

Եւ զաշխարհ օրհնեալ, զհաշտութիւն մաղ-թեալ, զթողութիւն տուեալ.

Զթողութիւն հայցեալ, լալով աղբրոնեալ, զսրբութիւն խնդրեալ:

Հոգեւոր չեղեալ, ո՛չ իսկ շարձարեալ, եւ բնա՛ւ ո՛չ ամնջեալ.

Մահն հանդիստ եղեալ, յոյժ խաղաղացեալ, զհոգին աւանդեալ:

Դիմօք զուարթացեալ, տեսող զարմացեալ ընդ մահն եւ գովեալ.

Սիրելիք հասեալ, քահանայք հարկեալ, մե-ծապէս պատուեալ:

ՅԱստուծոյ շնորհեալ, զերեքն ուռճացեալ, յիշատակ թողեալ.

Յերիցս կրսերն լեալ, կարգաւոր գտեալ, վերայ իւր կանգնեալ.

Յերիցն մեծին այլ կրօնաւոր էր լեալ, պտուղ նոր խայծեալ.

Այսր հովանացեալ, զգաղաղն բարձեալ, զթաղունն արարեալ:

Մահն յայսմ հոչակեալ, բարեբաստացեալ, եւ գովարանեալ:

Արդ Մխիթարեա՛ եւ այլն:

Արդ զմեզ ողբացէք, աւաղ ասացէք, զոր-բերս լացէք.

ԶՔեօմուրճին լսէք, մեռեր է ասէք, զորբերս ողբացէք:

Յաշխարհ ազգ արէք, յերկիր դուժ հանէք, զորբերս սրբացէք:

Գիր ՛ւ ի թուղթ ասէք, բարունեաց գրեցէ՛ք, սիրելեաց զեկուցէք:

ԶՔեօմուրճին տեսէք, զհոգն ի միտ անէք, լալով ողբացէք:

Զբարխտին յիշէք, զկեանք ի միտ անէք, զգերեզմանն տեսէք:

Ի՛ս օրս ձեզ իմացէք, զիպէլոց ասէք, հոգւոց պէտ արէք.

Եւ որք պատրաստէք, զողորմիս տուէք, զյոլով վարձս առնէք:

Արդ Մխիթարեա՛ եւ այլն:

Սոյն տողերը ծնողատէր զուկի մը սրտին անկեղծ արտայայտութիւնը ըլլալով հան-դերձ, կը պարունակին ո՛չ նուազ մեծ գո-վութիւն Տէր Մարտիրոսի համար, եւ ինչո՛ւ վութիւն Տէր Մարտիրոսի համար, եւ ինչո՛ւ չէ՛ քանի որ Երեմիա Զէլէպիի պէս պատուա-կանի մը, եւ Տէր Կոմիտասի պէս պատուա-կան եւ սուրբ Քահանայի մը Հայր եղած էր: Կան եւ սուրբ Քահանայի նշանեան սոյն աղ-Քիս հետ յղած էր ինձ քանի մը ծանօթու-թիւններ որոնք հետեւեալներն են:

Լուսաբանութիւն Բ. եւ Գ. տուներու: — Ողբիս սոյն երկու տուներէն կ'իմանանք, որ Զէլէպիի նախահայրերը կը պատկանին որ Զէլէպիի Երեմիան նահանգներէն եղեր Հայաստանի մեծ զարմի մը, որ կը մէկուն ազնուական մեծ զարմի մը, որ կը զաղթեն Դարանաղեաց երկիրը ու կը բնա-կին «Խօճայից» կոչուած գիւղը: Ժամանակ կին «Խօճայից» կոչուած գիւղը: Ժամանակ անցնելէ վերջ՝ ձէլալիներու հարստահարու-թեանց երեսէն զէպ ի Պոլիս ու շրջակայները

տեղի ունեցած մեծ գաղթականութեան հոսանքին կը խառնուի նաեւ Չէլչպիի պապը ու իրեն բնակութեան վայր կ'ընտրէ Կելիպոլու քաղաքը, ուր կը ծնի Չէլչպիի հայրը՝ Մարտիրոս: Սա չորս տարեկան հասակին մէջ հօրմէն որբանալով, կը տարուի Պոլիս ու մինչեւ յարբուս հասնելը կը փոխէ շատ մը արհեստներ: Բարեկամներու յորդորանօք կը մտնէ աշխարհի կարգը կամ կ'ամուսնանայ ու ապա իր անդրանիկ որդւոյն՝ Երեմիայի ծնելէն երեք ամիս վերջ կնոջը քեռին՝ մահի: Ամբակումը կ'ուղարկէ զինքը Երուսաղէմ: Հոն երկու տարի մնալէն յետոյ քահանայ կը ձեռնադրուի պարոն տէր Գրիգոր պատրիարքէն ու անոր յանձնարարական գրով կը վերադառնայ Պոլիս: Այս մասին Չէլչպի իր «Օրագրութեան» մէջ կը գրէ հետեւեալը. «Այս քրիստոսասէր [Մհի. Ամբակում] առաքէ զհարազատն իմ յԵրուսաղէմ յետ ծնելոյ չուտիս ամսոյ երկոյ, եւ գրէ առ հայրապետն [Պարոնտէր], զի ձեռնադրեաց քահանայ: Եւ յորժամ եկն՝ զամենայն ընթրիսն տեսեալ [Մհի. Ամբակումայ] թէ յանուն ննջեցելոց իմոց մատուցի պատարագը» (Օրագրութիւն թղ. 275 բ):

Չորրորդ տունին երկրորդ տողին խօսքը կը լուսարանուի Չէլչպիի «Օրագրութեամբ», ուր առաջ բերելով Փիլիպպոս կաթողիկոսին Պոլսէն մեկնելուն առթիւ 1653 Մարտ 26ին Ս. Նիկողայոս Եկեղեցւոյն մէջ Պոլսահայ ժողովուրդին խօսած հրատեչտի քարոզին բովանդակութիւնը, ի միջի այլոց կը գրէ. «Եւ վասն հարազատին իմոյ ասաց՝ թէ Տէր Մարտիրոսն Սուրբ Սարգսայ ինձ վէժել եւ աւագերէց Սուրբ Էջմիածնայ, որպէս զի ի վերայ գանձանակին լիցի եւ նորին ձեռամբն հասանիցի ինձ» (Օրագրութիւն թղ. 40 բ):

Ճա տունին 9ա տողին գերեզմ ուռնացեալ բառերը կը նշանակեն՝ Երեք արու զաւակները որոնք են՝ Երեմիա, Գէորգ եւ Տէր Կոմիտաս: Վերջնոյս համար է որ 10 տողին մէջ կը գրէ. «Երբիցս կրտսերն լեալ, կարգաւոր գտեալ»: Մենք գիտենք, որ Տէր Մարտիրոս ունեցած է նաեւ աղջիկ մը Երեմեկ անուն, բայց կ'երեւի թէ սա հօրմէն առաջ վախճանած է ուր չի մեջտեղ ողբիս մէջ:

Այս տունին 11ա տողին՝ «Յերիցն մեծին»

այսինքն իրեն՝ Երեմիա Չէլչպիին «պտուղը» կամ որդին, որ կրօնաւոր եղած էր ու կը կոչուէր Գրիգորիս վարդապետ, ինչպէս գրած եմ:

Հոս ալ տուներուն սկզբնատառերը կը յօրինեն «Երեմիա», բայց ողբս չի յայտնէր թէ Տէր Մարտիրոս է՞րը է վախճանած:

1911 Մայիս 1ին Ամասիայէն Պոլս. Կարապետ Գաղապեան կ'ուղղէր ինձ նամակ մը, որով կ'իմացնէր թէ ունի Չեռագիր Տաղարան մը, որուն մէջ կը գտնուի եղբր Երեմիա Չէլչպիի Ս. Կոյս Մարիամու վրայ գրած մէկ Տաղը Հայերէնով եւ Թուրքերէնով, եւ կը խրկէր ինձ անոր մէկ օրինակը, զոր կը ներկայացնեմ թուրքերէն տողերը զուրս հանելով.

Երանեալ Կոյս սուրբ Տաղիթայ Մարիամ.
 Փրկչին մերոյ տուն եւ տեղի բնակութեան.
 Բարունոյն բան որ ի ծոց Հօր յառաջմէ,
 Նա հաճեցաւ մարմին առնուլ ի քենէ.
 Եկեալ հրեշտակն ետ զաւետիս ողջունի.
 Ի քեզ իջցէ ամենազօր սուրբ Հոգի.
 Մաքուր հոգոյդ մաքուր հոգի իջանի.
 Յայն ժամանակ անմայր ծնեալ Հօր ծոցի.
 Իսկուհի ծնունդ քո սուրբ եւ սիրալի,
 Ծառ կենաց դու ծաղիկ անթառամելի.
 Արդ սրբուհի գեղ լեզու դրվատէ.
 Զգեղեցկաչէն տաճարդ լուսոյ ո՞վ գովէ.
 Յարկ գերարբին Աստուածընկալ դու խորան.
 Սափոր ոսկին լցեալ առ քեզ մանանայն.
 Ի քեզ նայիմ ծնող անեղին մայր սուրբ կոյս.
 Բարեխօսեա՛ առ քո զորդին Տէր Յիսուս.
 Էյ հայրք եղբարք իղձս ո՛չ արգել յայսմանէ.
 Անմեղապիր լինել հայցեմ Ձեզանէ:

Դուրս երկարած տողերուն սկզբնատառերը վերէն վար կը յօրինին «Երեմիայի Է» խօսքը, եւ այս իսկ է Երեմիա Չէլչպիի ստորագրութիւնը, զոր տեսանք անոր գրած բոլոր Տաղարանագիրներուն եւ Ողբերուն մէջ ալ:

Ս. Կոյսին նուիրուած այս գեղեցիկ Տաղով կը փակեմ Երեմիայի կենսագրութեան լրացուցիչ տեղեկութիւններս, աւելցնելով՝ թէ Տէր Մեսրոպ Սրբազան Նշանեան կը տեղեկացնէ ինձ, որ Երուսաղէմի ձեռագրաց Մատենադարանը Հայ Ամթեցի Մինաս Պա-

տրիարքին գրեթէ 25 տարուան ինքնազէր մէկ Օրագրութիւնը, որուն մէջ ՌձՆԵ (1696) Ապրիլ 2ին, Հեղինակը՝ Եւզոկիա գտնուած ժամանակ, յիշատակած է եղբր, նոյն օրը Կ. Պոլսէն ստացած մէկ նամակը՝ որ Երեմիա Չէլչպիի մահը կը գուժէր.
 Ահաւաստիկ այդ յիշատակութիւնը.

«ՌձՆԵ (= 1696) Ապրիլ Բ. օրն Հինգշաբթի, Ստամբուլու Բ. գիր Եկալ, մին պարուն Ալեքսանէն եւ մին Էֆիգէն. Սեբաստացի հայ մի երբեր, եւ մեր յարութիւն գիր գրեալ ընդ քուրբի մի մարտ ժԸ.ին եւ Ալիքսանի գիրն Ի. Մարտին գրեալ, եւ լուսաբ ի գրոյն նոցա զմահ Բօմբուրնի Երեմիային»:

Երեմիա Չէլչպի Քէօմիւրճեան 1695ին մեռած է, ինչպէս գրած եմ (էջ 189), զո՛ւցէ տարւոյն վերջերը պատահած է անոր մահը, զոր ամիսներ յետոյ՝ 1696 Ապրիլին իմացած զոր ամիսներ յետոյ՝ 1696 Ապրիլին իմացած է Մինաս պատրիարք Ամթեցի. Կ. Պոլսէն է ստացած նամակներէ, որոնք չեմ կարծեր թէ ճիշդ Երեմիայի մահուան օրերը գրուած ըլլան:

ԴԱՏ. ՎԱՀՐԱՄ՝ Յ. ԹՈՐՊՈՄԵՆՍ



ՓՈՐՈՍՔՆԵՐ ԶՈՒՂԱՀԱՅ ԵՒ ՀՆԳՎԱՀԱՅ ԲԱՆԱՀԻՐԱՌԻԹԻՒՆՆԵՐ

(Տաղեր եւ ժողովուրդական նրբեր):

2. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

ա. Հրածեշտ հարսի:

Արդ հրամանաւ Աստուածային
 Եկեալ բազումք ընդ փեսային,
 Կայեալ ձեռաց զիս կու տանին:
 Մնաք բարեա՛ւ, ես գնացի,
 Շատ խնդացի եւ շատ լացի:

Օրհնեա՛ գրուտոր քո ազնիւ հայր իմ,
 Մի՛ վշտանար, թէ բաժանիմ,
 Հայրական գութդ ի մտի ունիմ:
 Կեա՛ց դու բարեա՛ւ, ես գնացի,
 Շատ խնդացի եւ շատ լացի:

Օրհնեա՛ գրուտոր քո իմ անդին մայր,
 Որ շատ երկամբ դու զիս ծնար
 Եւ հոգ տարար ինձ մայրաբար:

Ահա՛ տամ քեզ քո բանալին,
 Ա՛ն զայս յինէն, տաս քո հարսին,
 Շատ են փականք տան փեսային:

Մա՛յր իմ, սիրես լոյս հաւատդ,
 Մի՛ մոռացես քո զաւակդ,
 Հալալ արա՛՛ ճերմակ կաթիդ:

Վաստակ կրեցիք, զիս պահեցիք,
 Մինչ ցայս հասակս ինձ հասուցիք,
 Ահա կամաւ դուք զիս թողիք:

Եղբար՛ք եւ քո՛րք իմ սիրական,
 Եւ ընտանի՛ք ինձ պատուական,
 Մի՛ մոռանաք ինձ յաւիտեան:

Յօրէ՛ յորմէ ծնայ յայս տան,
 Չէ՛ի մնալոց աստ յաւիտեան,
 Եղբարքս լիցին հաստ սիւն այս տան:

Արդ, օրհնութեամբ Աստուածային,
 Ամենեցուն դուտար եւ որդին,
 Արժան լիցին այս պսակին:
 Մնաք բարեա՛ւ, ես գնացի,
 Շատ խնդացի եւ շատ լացի:

բ. Եալալի:

Եա՛լալի, հայ ջանիման-ջանիման,
 Եա՛լալի, ջախտ արարին ջանիման.
 Եա՛լալի, պատկերդ ա աննման,
 Եա՛լալի, դէմք քո պայծառ փայլման:

Եա՛լալի, գլխիդ գաթաղուդ թեւն,
 Եա՛լալի, դու առ իմ սրտի մէջն.
 Եա՛լալի, զմիջերդ ա մանուշակ,
 Եա՛լալի, դո՛ր անմահական թոշակ:

Եա՛լալի, մանդիլդ ա նափրման,
 Եա՛լալի, թէ՛րդ պայծառ փայլման.
 Եա՛լալի, զմիջերդ ա աննման,
 Եա՛լալի, գլխիդ պատատ գոլման:

Եա՛լալի, յունքերդ ա թաղ տուած,
 Եա՛լալի, սրտիս մէջն դաղ տուած.
 Եա՛լալի, աչքեր ունիս ջէ՛րանի,
 Եա՛լալի, տեսնողի խելքն տանի:

Եա՛լալի, երբոր իշարաթ կանես,
 Եա՛լալի, սրտիս մէջը կը դաղես.
 Եա՛լալի, յուշս գլխէս կտանես,
 Եա՛լալի, սաղ-սաղ ինձ կապանես:

Եա՛լալի, պոնչկնէրդ դրմզի,
 Եա՛լալի, ալամ դարձէլ ինդլիզի.
 Եա՛լալի, արբարթով գրուց տաս,
 Եա՛լալի, սիրով սրտիս նստած աս: